

ԱՐՕՏ

ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Թիւ 6·

ԱՄՍԱԳԻՐ

ՅՈՒՆԻՍ 30
1876·

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՅՈՒՆԱԿԱՆ ՆԵՆԳՈՒԹԻՒՆՔ

ԵԱՏ անգամ առիթ ունեցած է Աիօնը ազգայնոց հաղորդել տեղւոյս Յունաց Միաբանութեան նենգութիւններն, մեզ հասուցած անհնարին չարիքներն ու աղէտները, գործած բռնութիւններն, անիրաւութիւններն մեզ դէմ եւ մեր իրաւանց յափշտակութիւնները՝. այս անգամ եւս կը պարտաւորի մի քանի խօսք ասել, ոչ թէ Յոյներն պարտաւելու նպատակաւ. ոչ, վասն զի ամեն ոք գիտէ նոցա ինչպիսի ազգ լինելը. պատմութենէ քիչ շատ տեղեկութիւն՝ունեցող ամեն անձ գիտէ Յունաց նենգութիւնները, մերկապարանոց անամօթութիւնը և այլոց իրաւունքներն բռնաբարելու և յափշտակելու վատ և անարգ ոգին, այլ միայն Ս· Աթոռոյս դառն կացութիւնը և առ այս ազգին անտարբերութիւնը ցուցնելու համար կը գրեմք.

Ազգ. ամեն անհատ կամ տեսնելով եւ կամ լսելով, գիտէ, որ մեք Ս· Երուսաղէմի մէջ բաւական հաստատութիւններ ունիմք, Ս· Տեղեաց մէջ շատ իրաւունքներ ու տեղեր ունիմք. բայց գիտէ՞ն արդեօք թէ այս հաստատութիւններն, այս իրաւունքներն ու տեղերն ունենալու համար, կամ ունենալէն յետոյ հաստատ եւ անկոծուստ պահպանելու համար՝ի սկզբանէ անտի ինչ զոհողութիւններ, թէ՛ բարոյական և թէ՛ նիւթական, ինչ

digitised by A.R.A.R.@

ջանքեր և աշխատութիւններ եղած են և քանի՛ քանի՛ անձինք զոհուած են. Ի հարկէ չեն գիտեր շատերն. որովհետև կան կարգ մի մարդիկ, որոց աչքին երբէք նշանակութիւն չունին այս օրինակ հաստատութիւնք, հետևաբար բնաւ հոգերնին չէ, եթէ ամենքը մէկ տեղ կորսուելու վտանգի մէջ ըլլան, կամ նոյն իսկ կորսուին. կան ալ, որք թէ և կը զգան և գիտեն այսպիսի իրաւանց մեծութիւնը և կարևորութիւնը, բայց որովհետև հմտութիւն չ'ունին Ս. Տեղեաց խնդիրներուն, ուստի չեն գիտեր թէ՝ ինչ նշանակութիւն ունի աւելի մը, կանթեղի մը և կամ անցուդարձի մը խնդիրը և հետևաբար առ այս եղած զոհողութեանց մեծութիւնը չեն կարող հասկանալ։ Այս է պատճառը, որ երբ շատ անգամ կը լսեն թէ Երուսաղէմայ մէջ աւելածութեան համար, կարգաւոր անցնելու համար ազգաց Կրօնական միաբանութիւններն իրարու գլուխ կոտրած են, և կամ երբ լսեն թէ՝ մեր Միաբանութիւնը Տէրութեան զինուորներով ու զէնքով դուրս արտաքսուած են մեր սեփհական Եկեղեցիէն, որպէս զի ազատ կերպով և առանց ընդդիմութեան աւելծեն Յոյնք ուր որ կուզեն, կը զարմանան այս տեսակ խնդիրներուն վերայ և կը խնդան անգամ, որովհետև կ'ըսեն, ինչպէս շատերու բերնէն լըսած եմք, թէ՝ աւելի լա՞ւ չէ որ այլք մեր Եկեղեցին աւլեն, ու բիծներն մեզ ազատաւորեն և մեք հանգիստ լինիմք։

Չեմք մեղադրեր այսպիսիներն, որովհետև ինչպէս ասացինք, չը գիտեն. չը գիտեն թէ Ս. Տեղեաց Մի–ւքէրէ* եղած տեղերուն մէջ Միաբանութիւն՝ մի իւր սահմանեալ իրաւունքէն արտաքս ուրիշ Միաբանութենէ մը աւելի անգամ մի աւելած է, մեծ իրաւունք մի կը վաստկի և ընդհակառակն միւսը կը կորսնցնէ. չը գիտեն, որ մի գամի կորուստը՝ մեծ իրաւունքի մը կորուստ է։ Սակայն մեղադրանաց արժանի են անոնք, որք այս ամենը գիտնալէն յետոյ ևս անտարբեր կը մնան Ս. Աթոռոյս Միաբանութեան կրած հալածանաց, նեղութեանց և վշտերուն. մեղադրանաց արժանի են, որք գիտնալով հանդերձ՝ իբրև ազգ բարոյապէս ձեռնտու չեն լինիր, չեն քաջալերեր և չեն մխիթարեր անգամ։

Թո՛ղ չը կարծեն արգոյ ընթերցողք, որ Սիօնը բողոք կը բառնայ Ազգին դէմ, տրտունջ կ'ընէ ազգէն. միայն պարզ խոստովանութիւն մի է այս՝ որ մեր Ազգը իւր իրաւանց համար կարի խոտոր պահանջ է. կուզէ հնձել, ուր չէ սերմանած. կուզէ ժողովել, ուր չէ վաստակած. թէ Ազգը՝ մեծ յոյսերով լի աչքը Երուսաղէմի վերայ դարձուցած է. բարոյական մեծ օգնութիւններ կը սպասէ։ Սակայն երանի՛ կը լինէր, եթէ խոստապահանջ իրաւաճանաչութեան քառորդին չափ պարտաճանաչ ևս լինի։ Տարունակ կը տառապի, շարունակ կը չարչարուի Ս. Աթոռոյս Միաբանութիւնը. նա մանաւանդ վերջին երեք չորս տարուան մէջ չը մնաց չարիք, չը մնաց վիշտ և ո՛չ հարուած, որ չը տեսնէր և չը կրէր Յունաց կողմէն։ Քեամիլ փաշայի օրով մեր սեփհական Եկեղեցիէն զինու զօրութեամբ, սուիններով արտաքսուեցանք 'ի շնորհակս Յունաց. մեր եկեղեցական զգեստներն պատառ պատառ եղան, խաչն ու գաւազանը խորտակեցան Յունաց անտի–քրիստոնէական բարբարոսութեամբ և Նշխեցեալը բռնաբարեցաւ. այս ամէն աններելի ոճիրներուն դէմ բողոքեցինք. բայց 'ի զո՛ւր. Ազգը լռեց անտարբերութեամբ և բան մի չըրաւ։ Բարեխնամ Տէրութենէն արդարասէր

digitised by A.R.A.R.@

Յանձնաժողով մը խնդրեցինք, որ կամ մեր իրաւունքներն եթէ ունինք, արդարակեր քննութեամբ յերեւան հանէ. և կամ եթէ չունինք բացորոշակի յայտնէ, որպէս զի գլուխնիս և թեւերնիս ալ ուրիշ տեղը կտորել չը տամք Յունաց. այլ եւս եկեղեցական պաշտամունքնիս չը խափանուի և ոչ եկեղեցական սպասնիս Յունաց որբապիղծ ձեռքը խաղալիկ լինի: Ի՞նչ եղաւ, ո՞ւր մնաց մեր այս խնդիրը, որ մի՛ չը մտածեց Ազգը, չը մտածեց թէ այս եղանակաւ Երուսաղէմայ Միաբանութեան վախճանը ուր պիտի եղերի. Անշուշտ Յոյնք մեր այս ազգովին անտարբերութիւնը տեսնալով է, որ ամեն օր նոր նոր նենգութիւններու կը ձեռնարկեն. ամեն օր նոր նոր աղէտաներու դուռ կը բանան մեր առջեւ և ամեն օր մեր արդար և դարաւոր իրաւունքներն յափշտակելու փորձ կը փորձեն անպատուհաս:

Ի Ս. Ծնունդ մեր սեփհական Եկեղեցւոյ մէջ երեք պատուհանաց աւելածութիւնը երեք չորս տարի է, որ խնդրոյ տակ է. Յոյնք կուզեն, որ իրենք աւլեն, բայց մեք կ'ըսեմք, որ մերն լինելով մեք պիտի աւլեմք: Անցեալ տարի Բ. Դուռը ճանաչելով մեր իրաւունքը՝ հրաման տուած էր, որ աւլեմք. Յոյնք այս հրամանագրին դէմ բողոքեցին Կառավարչին, որ Ալի Պէյն էր, բողոքը լսուեցաւ և հրամանագիրը ըստ օրինի չը գործադրուեցաւ: Այս տարի քաղաքիս արդի Կառավարիչը Ֆայիգ Պէյ, 'ի նպաստ մեզ եկած հրամանագրոյն այլեայլ մեկնութիւններ տալով ոչնչացոյց և նոր հրամանագիր մը բերել տուաւ, որ Յոյնք աւլեն: Ներկայ ամսոյս մէջ Կառավարիչը եկած հրամանագիրը հաղորդեց Ս. Աթոռոյս կառավարութեան, որոյ դէմ բողոք եղաւ պնդելով՝ որ աւելածութեան իրաւունքը մերն է. չը լսուեցաւ բողոքը. այլ Կառավարիչը Բեթլեհէմի Միւտիւրութեան հաղորդեց հրամանագիրը պատուիրելով՝ որ անմիջապէս գործադրել տայ: Հրամանագրի գործադրութեան օրը Յոյնք այս անիրաւութիւնը բաւական չը համարելով՝ գիշեր ատեն մեր Թչֆաջ–Բէկան սեղանին քովի պատկերը կը գողանան, անշուշտ իրենցմէ պատկեր գնելու նպատակաւ. մերայինք կըզգան Յունաց մերկապարանոց աւազակութիւնը եւ կ'ուզեն ուրիշ պատկեր մի կախել. բայց անմիջապէս Յոյնք Կառավարութեան լուր տալով՝ զինուորներ բերել կը տան և կ'արգելուն անամօթաբար ըսելով, « Հայք մեր պատկերը գողցած են իրենցը գնելու համար »: Այս միջոցին երբ խնդիրն կը ծանրանայ և մեր Միաբանութիւնը կը պնդէ թէ՝ « Դուք մեր պատկերը գողցած էք ». Յունաց միաբաններէն մէկը յառաջ գալով զինուորականաց ներկայութեան կը խոստովանի, որ « Պատկերը ոչ թէ գողնալու մտօք վերուցինք, այլ մեր Պատրիարքը ուզած էր, Երուսաղէմ ղրկեցինք, որ տեսնէ. վերջը նորէն տեղը պիտի դընեմք »: Սակայն որչափ որ արեգական պէս կը յայտնուի մեր իրաւունքը և Յունաց գողութիւնը, բայց դարձեալ Միւտիւրին և քաղաքիս Կառավարչին միակողմանի և անարդարասէր ընթացքին շնորհիւ մեր պատկերը չը կախուիր և տեղը խնդրոյ տակ կը մնայ:

Մի և նոյն օրը՝ Յունիս 11 ին, տեղւոյն Միւտիւրը զօրքերով կը լեցնէ մեր Եկեղեցին, եւ ապա մեր Տեսչին լուր ղրկելով՝ վար կը կանչէ, նոյնպէս Յունաց Տեսուչը: Այնուհետեւ Բ. Դռնէն և Կառավարչէն եկած կրկին հրամանագրերը կարդալ տալով՝ կը հրամայէ Յունաց Տեսչին երեք պատուհանները աւլել տալ: Մեր Տեսուչը

թախանձանքը կը խնդրէ Միւտիւրէն գործադրութիւնը երկրորդ աւուր ձգել, մինչև ինքը Ս. Պատրիարքին գրէ և անկէ պատասխան մի ընդունի. չընդունիր Միւտիւրը եղած խնդիրն, մինչ դեռ եթէ Յունաց կողմէն լինէր, անպատճառ կ'ընդունուէր. թէ ինչ է սորա պատճառը՝ հարկ չեմք համարեր ըսել, այլ ընթերցողին կը թողումք իմաստասիրել։ Մեր Լուսարարը կ'ըսէ, «Տերութեան հրամանը սիրով կ'ընդունիմք և առ այս ըսելիք մի չունիմք. բայց չեմք թողուր, որ Յոյնք մեր Եկեղեցւոյ մէջ սանդուխ դնելով աւլեն. թող աւլեն ուրկէ որ կուզեն, բայց ոչ մեր Եկեղեցւոյ մէջէն»։ Միւտիւրը կը զայրանայ և կը հրամայէ ոստիկաններուն վերցնել մեր լուսարարը մեր սեփհական Եկեղեցւոյ մէջ և կը վերցրնեն և այսպէս բուռն զօրութեամբ աւլել կը տայ Յունաց՝ զսհելով նոցա մեր դարաւոր իրաւունքները։

Ո՞ր զգայուն սիրտ կրդիմանայ այս գործուած բռնութեանց դէմ. ո՞վ չը զարմանար երբ լսէ և տեսնէ, որ Երուսաղէմայ Կառավարիչը 'ի շնորհուկս Յունաց մեր Եկեղեցին զօրքերով լեցընէ և զմեզ բռնի արտաքսէ. որպէս զի Յոյնք անարգել իրենց բռնաբարութեան և յափշտակութեան գործերն յառաջ վարեն։ Մեր Ս. Պատրիարքը այս ամենուն դէմ բողոքեց Բ. Դրան, նոյնպէս բողոքեց Կառավարչին, որ մինչեւ անգամ համարձակեցաւ ընդդէմ ամբողջ Հայ — Ազգին զգացմանց և իրաւանց, ընդդէմ Կայսերական հրովարտակին Պատրիարքական իրաւունքը ջնջել՝ բողոքագիրը յետ դարձնելով։ Այս մասին եւս բողոքուեցաւ Բ. Դրան հեռագրով այն յուսով, որ Օգոստափառ Կայսրը անշուշտ չը պիտի զլանայ մեզ իւր հայրական գութն ու կարեկցութիւնը։

Ահա այս է Ս. Աթոռոյս Միաբանութեան ամենօրեայ վիճակը. ամեն օր տառապանք, ամեն օր անձկութիւն և ամեն օր նախատինք այլ և այլ ազգաց առջեւ։ Թող կարդան այս ամենը անոնք, և զգան եթէ սիրտ, խիղճ և զգացում ունին, որք առանց ամաչելու Ազգ. Երեսփոխանութեան մէջ փորձեցին իրենց մրոտ ձեռքերը Ս. Աթոռոյս Միաբանութեան երեսը քսել այլ և այլ եղջերուաքաղ ստութիւններ յերուրելով. թող կարդան, դատեն և վճիռ հատանեն. — Արդեօք Ս. Աթոռոյս Միաբանութիւնը իւր այսքան նեղութեանց մէջ ժամանակ ունի՞ իրենց յղացած ապգամիտս խորհուրդներով զբաղիլ. թող կարդան նա և անոնք, որք մեծամեծ ակնկալութիւններ ունին Երուսաղեմէն. կարդան և հասկանան թէ՝ Ս. Աթոռոյս Միաբանութիւնը արտաքին հարստահարութիւններէ և արհաւիրքներէ ժամանակ ունի՞ արդեօք Ազգին ակնկալութեանց պատասխանել. ունի՞ միջոց Ազգին ապագային վերայ խորհելու. ունի՞ նիւթական կարողութիւն բարոյական հաստատութեամբք Ազգին օգնելու։ Ասոնց պատասխաններն իւրաքանչիւր ընթերցող ինքն իւր խղճին թող տայ։ Բայց մեք այսքանը միայն կ'ասեմք, որ Երուսաղէմայ Միաբանութիւնը իւր բաղմադիմի տառապանաց մէջ անգամ Ազգին պատիւը, Ազգին իրաւունքները պաշտպանելով հանդերձ՝ կը տքնի հոգւով չափ Ազգին յոյսերն եւս պըսակել։ Կարող են այս մասին ամեն տեսնողներն վկայել և հաստատել, որ ըսածներս մէջ նշանախեցի մը չափ անգամ չափազանցութիւն չը կայ։ Շուտով չը յուսահատիր Ս. Աթոռոյս Միաբանութիւնը. բայց Ազգն ալ պէտք է ձեռնտու լինի բարոյապէս ըստ իւր պարտաւորութեան, քանի

digitised by A.R.A.R.@

որ ամեն բան իրենն է և իրեն կը պատ-
կանի և ոչ թէ մասնաւոր անհատի մը
կամ Միաբանութեան մը։

ՑԻՍՈՒՍ

ՑԱՏԵՆԻ ՀՐԷՒՑ

Աստուածորդւոյն Յիսուսի՝ մարդ-
կային ազգին աւանդած կտակը՝ այն
է Աւետարանը, մի այնպիսի գե-
ղեցիկ, սրտառուչ, օգտաշատ և ըն-
քանչելի մատեան է՝ որոյ առհասա-
րակ մարդկային ազգի մատուցած բազ-
մադիմի օգուտներն և անհամար բա-
րիքները աշխարհի սկիզբէն ցարդ բո-
լոր հեղինակաց, ամեն փիլիսոփայից և
համայն գրագիտաց երկնած և երկա-
սիրած հեղինակութիւնները չեն կա-
րողացած մատուցանել։ Ս. Աւետա-
րանը մի այնպիսի Մատեան է, որոյ
մէջ ամեն աստիճանի և հասակի մար-
դիկ կարող են գտնել իրենց վիճակին
և կացութեան վերաբերեալ օգտակար
խրատներ և քաջալերական յորդորներ,
ուստի որ և է վշտացեալ, անկեալ,
հալածեալ և տառապակիր մարդ՝ երբ
աշխարհի ցաւերէն ճնշուած մարդ-
կանց անիրաւութենէն սիրտը դառ-
նացած յաջողութենէ յուսակտուր և
լքեալ հոգւով Աստուծոյ միսիթա-
րութեան և օգնութեան կը դիմէ.
երբ Ս. Աւետարան կը կարդայ քրիս-
տոնէական ջերմ եռանդով. քանի միսի-
թարութիւն, քանի սփոփանք և քա-
նի բերկրութիւն չզգար նորա պրած
սիրան և լքեալ հոգին. երբ կը տես-
նէ հոն Աստուածորդւոյն Յիսուսի բա-
նիւ և գործով ցոյց տուած գեղեցիկ
համբերատարութեան, արիական նա-
հատակութեան վսեմ օրինակները։

Առաքինի և բարեգործ մարդ մը, իբ-
որ և է մի բարենպատակ ձեռնարկու-
թեան դէմ նախանձու և չարակամու-
թեան հանած խոչնդոտները երբ կը
տեսնէ՝ անիրաւութեան եւ բռնու-
թեան փոթորիկներէն հալածուելով,
երբ չարչարանաց եւ դատապարտու-
թեան կը մատնուի և այս ամեն զբր-
կանքներէն հոգին դառնացած և սիր-
տը արեամբ լցուած՝ իր միակ միսի-
թարութիւնը երբ Ս. Աւետարանի
մէջ կ'գտնէ. այնպիսին քանի միսիթա-
րութիւն և քաջալերութիւն չզգար
գտնելով հոն Աստուածորդւոյն Յի-
սուսի այն վսեմ և պատկառելի սրբ-
նակը զոր ներկայացուցած է նա Հրէից
քահանայապետի դատաստանական,
կամ լաւ եւս է ասել բռնաւորական
ատենին առջեւ, որոյ պատմութիւնը
սրտառուչ և սքանչելի կերպիւ կը նը-
կարագրէ Յովհաննէս Ս. Աւետարա-
նիչն։

Հրէական քահանայից, դպրաց և
փարիսեցւոց կեղծաւոր դասերն, որք
'ի վաղուց հետէ Յիսուսի դէմ նախան-
ձու և ատելութեամբ լեցուած զայն
դատապարտելու և մահացնելու հնար
կ'որոնէին, մեծի ուրբաթու այն սու-
կալի գիշերն՝ սրոք և բրոք զինեալ՝ ա-
պերախտ Յուդայի առաջնորդութեամբ
երբ Յիսուսին կը հանդիպին կեդրո-
նեան հեղեղատի եղերքը և ձերբակա-
լելով զնա ժամանակի քահանայապե-
տին առջեւ կը ներկայացնեն, Քահա-
նայապետն հարցում կ'ուղղէ նմա եւ
կ'ուզէ բացատրութիւն լսել իր բեր-
նէն իր գործոց եւ վարդապետու-
թեանց մասին։

Առ այս Յիսուսի տուած պատաս-
խանը այսպէս կը ներկայացնէ մեզ.

digitised by A.R.A.R.@